



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-8-Ո-6
2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐ
ԵԼԵՆԱ ՄԻՀՐԱՆԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՔԸ
ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սյրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,
Ռ. Բարսեղյանի, Գ. Խանդանյանի,
Ա. Խաչատրյանի, Ս. Հարթենյանի,
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,
Վ. Ստեփանյանի, Հ. Փանոսյանի,
Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2018 թվականի մարտի 27-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ելենա Միհրանի Սողոմոնյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ դադարեցնելու վերաբերյալ հարցը, և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ 2018 թվականի մարտի 31-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր Ելենա Միհրանի Սողոմոնյանի լիազորությունները՝ պաշտոնավարման տարիքը լրանալու կապակցությամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ